# «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժգ.1)» կետով.

«ժգ.1) սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման հատուկ համարանիշների չափորոշիչները, ինչպես նաև դրանց հատկացման աճուրդների անցկացման կարգը.»։

**Հոդված 2.** Օրենքի 9.1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «գ» կետը կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման հատուկ համարանիշների աճուրդային մեկնարկային գները և հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման գները՝ ըստ չափորոշիչների,»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ)» կետով.

«թ) կազմակերպում և անցկացնում է տրանսպորտային միջոցների հաշվառման հատուկ համարանիշների հատկացման աճուրդները։»։

**Հոդված 3.** Օրենքի 13.2-րդ հոդվածոի 2-րդ մասի 1-ին նախադասության «մեծ պահանջարկ ունեցող», 4-րդ և 5-րդ նախադասությունների, ինչպես նաև 4-րդ մասի «Մեծ պահանջարկ ունեցող» բառերից հետո լրացնել «կամ հատուկ» բառերը։

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հոդված 5.** Սույն օրենքի 1-ին հոդվածով և 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության

կառավարության որոշումը և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱԽԱԳԱՀ**

**Վ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**

**«  »  _____ 2023 թ.**

**ք. ԵՐԵՎԱՆ**